



ՈՒՍԱՆՈՂԻ ՉԱՅՆ

ՀԱՄԱՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2008
ԹԻՎ 4 (23)

Կարճապես ընդմիջումից հետո՝ 3 ամիս առաջ, կրկին սապարեզ վերադարձավ «Ուսանողի Չայն -ը: Անցած երեք ամիսներին մենք հրատարակեցինք երեք ամսաթերթ, որոնցում արտացոլված էին Ձեր՝ սիրելի ուսանողներ, հողվածներն ու մտորումները երկրի ու արտերկրի ուշագրավ իրադարձությունների մասին: Շուրջ կմրները 2009-ը՝ վարահուրյամբ, որ հաջորդ 365 օրերը կլինեն բարեշատ, արգասաբեր քե՛ ուսումնական և քե՛ կենցաղային հաջողությունների առումով: Շնորհավոր Ամանոր և Ս. Ծնունդ: Կանչում ենք Բարձրյալին, որ հաջորդ տարին լինի բարի իրադարձություններով լի, Չեզ և «Ուսանողի Չայն -ին տա անկուրում կամք՝ հաղթահարելու մեր կյանքի հեղասահ ընթացքին խանգարող դժվարությունները: Շնորհակալություն որ մեզ հետ էիք: Կհանդիպենք 2009-ին:

«Ուսանողի Չայն -ի խմբագրակազմ


ԱՅՍ ՋԱՍԱՐՈՒՄ՝

- Ուսանողությունն ընթստացավ պետության պասիվ կեցվածքի ու վանդալիստ Վրաստանի դեմ
- Մուրացիկ երեխան այբուբեն է սովորում աստիճանների վրա... ո՛վ մարդկային արդարություն...
- Ինչպե՞ս արշավ գնալ և կենդանի վերադառնալ

Շնորհավոր
Ամանոր և Ս. Ծնունդ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ



Ո՞վ է Հայաստանի ու Ղարաբաղի հնարավոր տրոհումը կանխող միակ ուժը



Նախատոնական տրամադրությունների կիզակետում անհարմար է ծանրաբեռնել ուսանողների միտքը մեր կենցաղի անբաժան մասնիկը դարձած ներքին ու արտաքին քաղաքական վերլուծություններով: Այս օրերին բոլորը խոսում են տոնական սեղանների շուրջ հարազատների հետ հաճելի ժամանակ անցկացնելու մասին, սակայն, այնուամենայնիվ, որպես քաղաքականացված երիտասարդություն, չէինք կարող անտարբեր մնալ ու չհիշել ընթացիկ տարում մեր երկրի գլխից անցած փորձանքներն ու հաջողությունները: Նախագահական նոր ընտրություններ, քաղաքական ուժերի վերադասավորում, մարտի 1-ի տխուր դեպքեր, մեր երկրի իմիջի աննպատակահարմար «շրջայցը» եվրոպական բարձրագույն ատյաններում, փաստահավաք ու ժամանակավոր հանձնախմբեր, ղարաբաղյան հակամարտություն և այլն... մեկ խոսքով՝ տարին գունազարդ էր քաղաքական իրադարձությունների տեսանկյունից: Բոլորս ապրեցինք, տեսանք ու նկատեցինք այդ զարգացումները: Ունեցանք նոր նախագահ, 10 զոհ տվեցինք չարաբաստիկ մարտի 1-ին, հետո քաշքշվեցինք Եվրախորհրդում ու ամբողջ աշխարհին ցույց տվեցինք, որ հակառակ մեր հանդուրժողականության ավանդույթներին, այնուամենայնիվ կարող ենք իրար մի ուտելու, իշխանության նվաճման համար արյուն թափելու, ներհասարակական խաղաղ մթնոլորտը գույնզգույն հեղափոխությունների իմիտացիայով ու ցանկացած գնով խանգարելու լավագույն օրինակ ծառայել: Չեն ցանկանում անդրադառնալ ընթացիկ տարվա գուցե ամենաուշագրավ ու ամենատխուր այդ իրադարձությանը, հավատալով, որ առաջիկա մի քանի ամիսներին ԱԺ-ի փաստահավաք ու ժամանակավոր հանձնախմբերը ավելի լուրջ բացահայտումներ կանեն այդ մասին: Կցանկանայի ավելի շատ կենտրոնանալ ներքաղաքական ճղճիմ աթոռակռվի ու ծանր կենցաղային պայմանների արդյունքում մեր ուշադրությունից դուրս մղված ամենակարևոր հարցի՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների վերջին զարգացումներին:

1994-ի իրադարձից հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև առաջին փաստաթուղթն ստորագրվեց նոյեմբերի 2-ին՝ Մոսկվայում, Դմիտրի Մեդվեդևի միջնորդությամբ: Կասկած չկա, որ վերջին տասնամյակում մոսկովյան այս հանդիպումը

ամենաուշագրավն էր ղարաբաղյան կարգավորման բանակցություններում, եթե չհաշվենք Քի-վեստյան ու փարիզյան բանակցությունները, որոնք այնպես էլ իրավական ուժ չստացան: Մայնդորֆյան հռչակագիրը առաջին հերթին պայմանավորված էր Ռուսաստանի՝ տարածաշրջանում նոր նախաձեռնողական քաղաքականությամբ, հատկապես վրաց-օսական վերջին պատերազմից հետո: Ռուս-թուրքական և ռուս-ադրբեջանական հարաբերությունների նոր մեղրամիսը, Արևմուտքի չափից դուրս շահագրգռվածությունը հակամարտությունների շուտափույթ կարգավորման հարցում, հարցականներ առաջացրին հայ-ադրբեջանական և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների «շուտափույթ» հաստատման վերաբերյալ: Ո՞վ է աճապարողը: Ակնհայտ է, որ մեր տարածաշրջանը կենսական է Մոսկվայի համար. դեռևս անցած դարի 90-ականներին՝ հետսառըպատերազմյան առաջին հնգամյակում, Մոսկվան բազմիցս զգուշացնում էր Անկարային, որի համար Այսրկովկասը նույնպես պակաս կենսական չէր, որ Կովկասում ցանկացած նախաձեռնություն կամ պետք է արժանանա Կրեմլի հավանությանը, կամ, վատագույն դեպքում, պետք է համակարգվի ռուսների հետ: Այժմ պայմանները փոխվել են. Ռուսաստանը միակ դերակատարը չէ տարածաշրջանում: Թուրքիայի ակտիվ ու նախաձեռնողական քաղաքականությունը, հատկապես՝ Հայաստանի հետ միջպետական հարաբերությունների շինարարության իմաստով, լավ արձագանք գտավ նաև Մոսկվայում: Աբդուլլահ Գյուլի երևանյան այցին հաջորդեց Սերգեյ Լավրովի այցը Անկարա, իսկ «հետո» Մեդվեդևի այցը Երևան: Հայ-ռուսական «եղբայրական» հարաբերությունների ծառին երկուստեք ջուր ցանելու ավանդական ու արարողակարգային



ցուցադրական դեֆիլեից բացի, կուլիսներում նաև քննարկվեցին Թուրքիայի նկատմամբ պաշտոնական Երևանի «համառ մոտեցումների փափկեցման անհրաժեշտությունը: Թեև զարմանալի է, որ ցարդ ենթադրությունների մակարդակում գտնվող «լավ հարաբերությունների հեռանկարը մեր մամուլի ու հանձնարարականներ կատարող թերթերի կողմից ընկալվեց չափազանց ոգևորությամբ, օրինակ, Հայաստանում Թուրքիայի դեսպանի հնարավոր նշանակման մասին, քայլ, որը ոչ այլ ինչ է, քան հայտնի՝ «ցույց են տալիս, չեն տալիս ասացվածքի քաղաքական դրսևորումը: Հայաստանում վերջին սոցիալոգումները վկայում են, որ ի տարբերություն նախորդ տարիների՝ մեր հասարակության մեծ մասը կողմ է Թուրքիայի ու Ադրբեջանի հետ լավ հարաբերությունների հաստատմանը: Միայն քաղաքականապես անհեռատեսներն ու ֆաշիստները կմերժեն լավ հարաբերություններ ունենալ հարևանների հետ, սակայն յուրաքանչյուր քայլում պետք է նժարել օգուտն ու կորուստը: Վերադառնանք նույն հարցին՝ ո՞վ է աճապարում և ի՞նչու: Կարծում են Ռուսաստանը, որովհետև մեր երկրի արդյունաբերական համալիրի ու հաղորդակցության ցանցի գրեթե ամբողջական հանձնումը Ռուսաստանին արդեն համոզումնք է առաջացրել ռուս առաջատար վերլուծաբանների շրջանում, որ Հայաստանն արդեն «անհետաքրքիր երկիր է իրենց համար, ավելի լավ կլիներ, եթե Մոսկվան մի քանի նավթային խողովակ ավելի եռակցեր կամ ավելի ակտիվ մասնակցեր Ադրբեջանից դեպի Արևմուտք զննող գազամավթատար ծրագրերին: Բնականաբար այս քննարկումների արդյունքում նույնիսկ Մոսկվայում կհասունանա այն միտքը, որ դարաբաղյան կարգավորման «ցանկալի լուծումը ազատագրված տարածքներից հայկական զորքերի դուրսբերումն է ու Արցախի կարգավիճակի անորոշու-

թյունը: Իրատեսակա՞ն է այդ «ծրագիրը : Այո, բայց ոչ մեզ համար: Միաժամանակ անհեռատես կլիներ դեպի Արևմուտք շրջվելն ու... Վրաստանի ճակատագրին արժանանալը: Միակ հույսը Ղարաբաղն է ու այնտեղ ապրող ժողովուրդը, որը կարող է մերժել մոսկովյան, վաշինգտոնյան և ինչու ոչ՝ թուրք-ադրբեջանական ծրագիրը, որում, ցավոք ստրի, ներքաշվել է նաև Երևանը: Մայնդորֆյան հռչակագրի ամենամեծ թերությունը ԼՂՀ-ի ստորագրության բացակայությունն է: Հարկ է բոլոր դիվանագիտական ուժերով հասնել նրան, որ Ստեփանակերտը հորիզոնական բանակցություններ վարի Բաքվի հետ:

Բանակցությունների «խաղի հրատապությանը, կարծում են նպաստեցին նաև Հայաստանում նարնջագույն ավանտյուրիստները: Չմոռանանք, որ արցախյան բանակցություններն ակտիվացան նախագահական վիճահարույց ընտրություններից հետո, իսկ Եվրախորհրդում ծայրի իրավունքից չզրկվեցինք, որովհետև կարծեք թանկ գին ենք վճարում՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատում՝ ոչ հայանպաստ տարբերակով:

Եվ ի՞նչ: Հարմարվե՞լ պարտվողականությանը, վախենա՞լ օտարազգի «ստրատեգների՝ մեր անկախ պետականության ու վերջին հազարամյակում ազատագրած տարածքները հակառակորդին «նվիրաբերելու ծրագրերից: Ոչ մի դեպքում: Եթե վախենանք՝ նույնիսկ առանց փամփուշտի կկորցնենք այն, ինչի համար մի քանի «եռաբլուր-ների գին ենք վճարել: Երիտասարդությունը պիտի չհարմարվի նման խաղի կանոնների, հանգիստ կյանքի գաղափարը մեզ չպետք է մղի համաձայնվել նման գին վճարելու: Գո՞նե մենք՝ երիտասարդներս, պետք է կանխենք հայկական երկու պետությունների հնարավոր տրոհումն ու 1920 թվականի ռուս-թուրքական բեմագրության կրկնությունը...

Որոշ գիտական տվյալներ Սպիտակի երկրաշարժի մասին



Օրեր առաջ լրացավ Սպիտակի աղետալի երկրաշարժի 20-ամյակը: Սփոփանքի ու մխիթարանքի խոսքեր՝ բոլոր զոհվածների ընտանիքներին, իսկ անմեղ նահատակներին՝ աղոթք հոգու խաղաղության համար: Որպես ոլորտին տեղյակ՝ կուզեի անդրադառնալ Սպիտակի երկրաշարժի հիմնական պարամետրերին.

Առաջացման ժամանակը - 1988 թ-ի դեկտեմբերի 7, 07 ժամ, 41 րոպե, 24.96 վայրկյանին. ըստ Գրինվիչի

ժամանակի՝ 11 ժամ, 41 րոպե, 24.96 վրկ՝ տեղական ժամանակով:

Եպիկենտրոնի դիրքը - լայնությունը՝ 40.9960+-2.9(հյուսիս), երկարությունը՝ 44.1970+-1.8կմ(արևելք), օջախի խորությունը՝ 11կմ:

Երկրաշարժի մագնիտուդը - 6.3 միջինը 8 բալ: Ամենամեծ տեղաշարժը՝ մինչև 2մետր, առաջացել է Գեղասարի շրջակայքում՝ 1950 մ բարձրության վրա: Գեղասար գյուղի շրջակայքում առաջացել է գրունտի ջրիկացում, որի պատճառով տուժել է 230 մետր երկարությամբ երկաթգիծը: Նշանակալի ավերածությունների են ենթարկվել նաև ավտոճանապարհները՝ 40-50սմ լայնությամբ երկայնական ճաքերի առաջացմամբ: Երկրաշարժի գոտում ժամանակակից բազմահարկ շինություններից փլուզվել են կամ մասամբ ավիրվել են Սպիտակում 87%-ը, Գյումրիում՝ 52%-ը և Վանաձորում՝ 24%-ը: Երկրաշարժից տուժել է հանրապետության տարածքի ավելի քան 40%-ը. 25 հազարից ավելի մարդ զոհվել է, 19 հազարը՝ վիրավորվել, ավելի քան 500 հազար մարդ մնացել է անօթևան: Քանի որ Հայաստանը գտնվում է երկրաշարժավտանգ գոտում. ստորև ներկայացնում է

ենք երկրաշարժի նախանշանները և պաշտպանության միջոցները.

Նախանշաններ.

փոփոխվում է ստորգետնյա ջրերի ֆիզիկաքիմիական բաղադրությունը

շենքերի ներքին պատերին նկատվում է երկնագույն լուսավորում

թռչունների և ընտանի կենդանիների մոտ նկատվում է անհանգստություն, առնետները և օձերը բներից դուրս են գալիս

Պաշտպանության միջոցներ.

հնարավորության դեպքում դուրս գալ շենքից, բայց ոչ բարձր հարկերում գտնվելու ժամանակ, քանի որ աստիճանները վտանգավոր են

թաքնվել սեղանի տակ

կանգնել հիմնական պատերի մոտ, անկյուններում, դռների բացվածքների մոտ՝ հեռու ապակիներից

հեռու կանգնել շարժվող առարկաներից

առաջին հարվածից հետո բացել մետաղյա դռները (որպեսզի դռները չփակվեն)

Երկրաշարժի հետևանքներն արագ վերացնելու համար պետք է ունենալ պետական ենթակայության տակ մշտական գործող, ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած փրկարար, կենսապահովման



ոլորտի շտապ վերականգման, հասարակական կարգի պահպանման և բժշկական օգնության կազմակերպման արհեստավարժ ջոկատներ: Այս խնդիրների կանոնա-կարգման համար նպատակահարմար է նաև համապա-տասխան օրենսդրության ընդունումը Ազգային ժողովի կողմից: Երկրաշարժին կարելի է հաղթել, եթե այդ գործի համար պատասխանատու ամեն մի պետական գործիչ ու գիտնական, նախագծող ու շինարար իր գործունեու-թյան ոլորտում ամենայն պատասխանատվությամբ լծվի այս համաժողովրդական գործին:

Անի Հարությունյան

Ուսանողությունն ընթաստացավ պետության պասիվ կեցվածքի ու վանդալիստ Վրաստանի դեմ



Մշակութային ցեղասպանության թուրք-ադրբեջանա-կան ավանդույթները կարող են որպես լավագույն բանաձև օգտագործվել համաշխարհային քաղաքա-կըրթության ոչնչացման համար: Ոչ թուրքական արժեքների նկատմամբ նրանց ատելությունը հասկանալի է մասնավորապես հայերին ու հույներին, որովհետև, բացի ազգային թշնամանք տածելուց, օսմանյան ժամանակներից նրանք մերժել են ամեն քրիստոնեականն ու այն համարել հակամահմեդական: Հասկանալի է, երբ թուրքն է ջարդում ու այլանդակում, բայց նույնքան անհասկանալի է մեր տարածաշրջանում հայկականից բացի միակ քրիստոնեական քաղաքա-կըրթության կրող՝ Վրաստանի դիրքորոշումը: Հայաս-տանի ուսանողական և երիտասարդական կազմակեր-պությունները վերջերս բողոքի մեծ ալիք էին բարձրաց-րել Վրաստանի Սուրբ Նորաշեն եկեղեցու, խաչքարերի, տապանաքարերի նկատմամբ վրացիների կիրառած վանդալիզմի դեմ: Նրանք ՅՈՒՆԵՍԿՕ-ից պահանջում են վճռական միջոցներ ձեռնարկել Վրաստանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիների նկատմամբ կատարվող ոտնձգությունները կանխելու համար: Երիտասարդների տարածած հայտարարու-թյունում նշվում է,- «Պատմամշակութային և հատկա-պես կրոնական նշանակության կառույցների և զերեզմանների նկատմամբ 21-րդ դարում կատարվող նմանօրինակ գործունեությունը կարող է տեղավորվել միմիայն մշակութային ցեղասպանություն հասկացու-թյան շրջանակում: Նման բովանդակությամբ բաց

նամակը երիտասարդները հանձնեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչին և Հայաստանում Վրաստանի դեսպան Ռևազ Գաչեչիլաձեին: Ընդունելով մի քանի ուսանողների՝ դեսպանը խոստացավ բաց նամակն ու նրանց պահանջը փոխանցել Վրաստանի կառավարությանը, միաժամանակ նշելով, սակայն, որ վրացական իշխանությունները «ազդեցություն չունեն եկեղեցու վրա: Ինչպիսի փայլուն միտք: Այստեղ գործում է հայկական տիպուկ ասացվածքը՝ դու ես խոտ ուտում, մե՞զ ես ոչխարի տեղ դրել: Դեսպանի այս փայլատակումից հասկացվում է, որ Վրաստանը աշխարհիկ պետություն է, այնտեղ գործում է լայնցիզմը և կրոնն ու քաղաքականությունը տարանջատված են: Ստացվում է այնպես, որ Վրաստանը երկրորդ Ֆրանսիան է, իսկ Սահակաշվիլին՝ նոր Շարլ Դը Գոլ: Մի բան էլ հիշեցի. 2006-ին Պետական համալսարանի բակում անցկացվում էր «Նիկոլ Աղբալյան ուսանողական միության «Աշակուբային եղեռն խորագրով ամենամյա ցուցահանդեսը, որի շրջանակներում նույնիմբը Գաչեչիլաձեն կարծիք հայտնեց, որ ԱՆԻի թագավորությունը վրացական է... նա ոչ միայն չդատապարտեց Թուրքիայի հայապատկան տարածքներում իշխանությունների կողմից տասնամյակներ շարունակ կիրառվող հայկական մշակութային սպանդը, այլև դրվատանքով խոսեց Մուսթաֆա Քեմալի մասին: Դեսպանն, իհարկե, արժանացավ իր վերաբերմունքին համարժեք՝ ոչ դիվանագիտական պատասխանի, ու



քերելու թույլտվություն Թբիլիսիի քաղաքապետարանը չի տվել, սակայն սքեմ հագած Տարիել Սիկինչելաշվիլի վանդալի շինարարական եռանդը կասեցնել ոչ մի կերպ չի հաջողվում: Եթե մեր պետությունն անգոր է կասեցնել այս վանդալիզմը, ուրեմն մեր երիտասարդությունը պետք է պատրաստ լինի ցանկացած գնով դիմակայելու դրան: Ապրե՛ք տղաներ, ապրե՛ք աղջիկներ:



արագորեն հեռացավ ցուցահանդեսից: Շատ ժամանակ չի անցել մեր երկրում Վրաստանի դեսպանի այդ հայտարարությունից, նույնպես երկար ժամանակ չի անցել՝ ընդամենը մեկ տասնամյակ, որ մեր հարևան երկիրը սրբապղծում է մեր քաղաքակրթության գոհարները: Հողվածի նպատակը վրացական շովինիզմը քննադատելը չէ, այլև մեր երիտասարդության հայրենապանձ կեցվածքի ընդգծումը: Մեր ուսանողությունը վերջապես կարողացավ զնալ ալիքին հակառակ: Մեր պետության աշխարհիկ ու հոգևոր այրերի ապարդյուն դժգոհություններն ու բողոքի նամակները ոչինչ չտվեցին մեզ: Եթե ուսանողությունը, որն ազգի ուղեղն է, խիղճն ու միտքը, չըմբոստանա նման վայրագությունների դեմ, ուրեմն մենք կկորցնենք արժանավայել ապրելու մեր իրավունքը: 600-ամյա սուրբ Նորաշենը այսօր պարսպապատվում է, ոչնչացվում են շիրմաքարերը: Հայկական տաճարի վրայից հայոց տառերը

Աբրահամ Գասպարյան



NO COMMENT ՀԱՐՑԱԶԲՈՒՅՑ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԻ ՀԵՏ

- Ինչպե՞ս որոշեցիր դառնալ կուսակցական:

- Սրանից մի տարի առաջ էր: Մեր ուսխորհրդի... -իկը եկավ, խորհուրդ տվեց մտնել իրենց կուսակցություն: Մենք էլ տղերքով մայեցինք, տեսանք՝ լավ կուսակցություն է, պատգամավորների կեսից շատը էդ կուսակցությունից է, որոշեցինք մտնել:

- Ի՞նչ կհաղորդես ձեր կուսակցության պատմությունից, գաղափարներից:

- Գաղափար-մաղափար չգիտեմ, էն կասեմ, որ ահագին ժամանակվա կուսակցություն է, Նժդեհն է ստեղծել:

- Համոզված ես. գիտե՞ս, որ Նժդեհը եղել է այլ կուսակցության անդամ, որի դրոշի ներքո էլ պայքարել է:


- Հաստատ մի բան շփոթում ես: Կես տարի առաջ ուսխորհուրդը Նժդեհին նվիրված ձրի համերգ էր կազմակերպել: Ուրիշ կուսակցության համար ինչի՞ պիտի կազմակերպեր:

- Լավ: Ի՞նչ կարող ես պատմել Նժդեհի մասին:

- Նկարը դեկանի կաբինետում տեսել եմ: Հնաճ հանդերձանքով, բեղերով մարդ է, հա՛, մեռած է: Գիտե՞ս՝ էդ մասին հարցրու մեր ...-ության դասախոս ...-յանին: Ինքը Նժդեհի մասին գիրք ունի գրած, համ էլ գաղափարներից լավ հասկանում է:

- Նա՞ էլ է ձեր կուսակցության անդամ:

- Հա բա ոնց: Երբ առաջին կուրսում էինք, ինքը կազմակերպեց, որ գնանք Ծաղկաձոր, հանգստանանք:



- Իսկ ո՞րն է ձեր կուսակցության դիրքորոշումը արտաքին քաղաքականության հարցերում:

- Ես քաղաքականությունով չեմ հետաքրքրվում: Լավ, հիշեցի. երկու ամիս առաջ մեր դեկավարը արտասահմանում խոսում էր էդ թեմայով: Ինչ որ ինքը ասում էր, էն էլ մեր դիրքորոշումն է:

- Եթե ձեր կուսակցությունն ընդդիմություն դառնա, կշարունակե՞ս անդամակցել նրան:

- Մեր կուսակցությունն ընդդիմություն է: Եղենց բան հնարավոր չէ:

- Իսկ այնուամենայնի՞վ:

- Դե, էդ դեպքում մեր ուսխորհրդի ... -իկը երևի մի բան կմտածի:

- Վերջում մի քանի խոսքով. ո՞րն է ձեր կուսակցության հիմնական ներդրումը երկրի զարգացման գործում:

- Մեր կուսակցությունը երկրի, մանավանդ՝ երիտասարդների մասին ամենաշատը մտածող կուսակցությունն է: Ամեն ինչ, որ կազմակերպվել է բուհում, մեր կուսակցությունն է հովանավորել (չես հավատում՝ կարող ես ռեկտորին հարցնել), հետո՝ ամենակարևորը, կուսակցության շնորհիվ շատ տարբեր տեղեր, շատ տարբեր միջոցառումների ենք գնացել: Նույնիսկ ուսխորհուրդն ու դեկանը դասավորել են, որ դժվար առարկաներից լավ գնահատականներ ստանանք: Էնենց որ՝ Առաջ, Հայաստան:

Մարիամ Կիրակոսյան

Ուսանողի նվազագույն սպառողական զամբյուղ. մաս 3 և վերջին. սփյուռքահայ ուսանողներ

Նախորդ համարներում նշել էինք, որ երևանաբնակ ուսանողների նվազագույն սպառողական զամբյուղը (այսուհետ՝ ՆՍՁ) կազմում է 48150 դրամ, իսկ շրջանաբնակ ուսանողներինը՝ 115200 դրամ: Այս անգամ հաշվարկվել է սփյուռքահայ ուսանողների նվազագույն սպառողական զամբյուղը՝ մեկ ամսվա կտրվածքով.

կեցության տուրք (վիզա)՝ 3750 դրամ (120 օր՝ 15000 դրամ)


տան վարձ՝ 30000 դրամ (մեծամասամբ ուսանողներն ապրում են երկուսով և տան վարձը կիսում (նաև ուսումնասիրվել է երևանի հանրակացարանների բնակվարձը, որտեղ քիչ թվով սփյուռքահայ ուսանողներ են բնակվում՝ միջինը 11000 դրամ

ամսավարձով)
կոմունալ ծախսեր՝ 3750 դրամ (3000 լույս + 500 գազ + 250 ջուր)
սնունդ՝ 35000 դրամ
հագուստ՝ 11500 դրամ (կոշիկ 1/6 մասը, շապիկ և այլն)
անձնական հիգիենայի պարագաներ՝ 1000 դրամ (անձեռոցիկ, ատամի մածուկ և այլն)
տրանսպորտային ծախսեր՝ 3750 դրամ (25օր*2 գնալ-գալ*(50+100)/2)
ինքնաթիռի տոմս՝ ամսական կուտակելով 12000 դրամ (144000 դրամ (գնալ-գալ)/12ամիս)
տետր՝ 400 դրամ (4հատ*100դր)

գրիչ՝ 250 դրամ (5հատ*50դր)
գիրք՝ 4000 դրամ (1 հատ)
այլ գրենական պիտույքներ՝ 750 դրամ (քանոն, մատիտ, վատման և այլն)
XEROX՝ 3500 դրամ (350էջ*10դր)
INTERNET՝ 2000 դրամ (160րոպե*5դր). այս հաշվարկում հաշվի է առնվել այն հանգամանքը, որ բուհերում ուսանողների համար գործում է անվճար INTERNET բջջային հեռախոս՝ 13000 դրամ
մշակութային միջոցառումների մասնակցության ծախսեր՝ 2000 դրամ (1 կինո՝ 500դր + 1 թատրոն կամ համերգ՝ 1000դր + 1 թանգարան՝ 500դր)
ժամանց՝ 6000 դրամ (սրճարան, ակումբ և այլն)
այլ ծախսեր՝ 5500 դրամ

ԸՆդամենը՝ 137 150 դրամ

Սուրեն Պարսյան



Ա ի կուրսի պատմություն

Բուհը՝ Հայաստանի Պետական Ագրարային Համալսարան
Ֆակուլտետի անունը՝ Ֆինանսներ եւ վարկ 1-ին կուրս, «Ա հոսք
Օճվել է 1.09.2008թ.՝ Երևանում



Կուրսում սովորում է 76 ուսանող, որոնցից 32-ը՝ «ա հոսքում, որոնք իրենց հերթին բաժանվում են 2 խմբի: Աղջիկների ու տղաների քանակը հոսքում հավասար է, բայց այս «ժողովրդագրական պատկերը շուտով կփոխվի, որովհետեւ տղաների ճնշող մեծամասնությունը համալսարան է ընդունվել Ա.Տ. հիմունքներով:

Կուրսն աչքի է ընկնում առանձնակի աշխուժությամբ. հատկապես ուրախ են անցնում ֆիզկուլտուրայի դասաժամերը: Բայց այս աշխուժությունը, որի մասին վկայում են ոչ միայն իրենք, այլև բարձր կուրսեցիները, 1-ին «ա-ին բնորոշ միակ հատկանիշը չէ: Այստեղ սովորողները ոչ միայն վաղուց արդեն հարմարվել են ուսանողական կյանքին, այլև հասցրել են ցուցաբերել բարձր առաջադիմություն: «Բուրդ դասախոսները գովում են հենց մեր կուրսն ու հատկապես մեր հոսքը, - նշում է Տաթևիկը: Իսկ Արսենը ավելացնում է. «Միջֆակուլտետային ինտելեկտուալ մրցույթում ամբողջ ֆակուլտետի 1-ին կուրսերից միայն մեր թիմն անցավ 2-րդ փուլ: Թիմի ավագն էլ ես էի: Ինչ խոսք, այս կուրսը դեռ բազմիցս կհասցնի դրսևորել իրեն: Սպասենք 1-ին «ա-ի նորանոր նվաճումներին:

Մարիամ Կիրակոսյան

Հ.Գ. Սիրելի՛ ուսանողներ, «Ուսանողի ձայն խմբագրությունը ցանկանում է այս շարքը դարձնել պարբերական: Եթե ուզում եք մեր թերթի էջերում տեսնել նաև ձեր կուրսի պատմությունը, կապվեք մեզ հետ թերթի վերջում գրված կոնտակտային տվյալներով:

Բենիամին Միրզոյանի 85 ամյակը

Լրացավ ԶՊԱՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր՝ Բենիամին Միմոնի Միրզոյանի ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության 60 տարին:

Բ. Միրզոյանը ծնվել է 1923թ. նոյեմբերի 15-ի, Լեռնային Ղարաբաղի Զանրապետության Մարտակերտի շրջանի Լյուլասազ գյուղում: 1940-ին գերազանցությամբ ավարտել է Մարտակերտի միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել է ԵՊՀ ֆիզմաթ ֆակուլտետ: Զայրենական մեծ պատերազմը ընդհատեց նրա ուսումնառությունը: 1942թ. մեկնել է ռազմաճակատ, վիրավորվել է երկու անգամ, այդ պատճառով 1945թ. ապրիլին զորացրվել է: Նույն թվականի սեպտեմբերից ուսումը շարունակել է ԵՊՀ-ում նոր բացված՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, որն ավարտել է 1950-ին:


1950-58թթ. ղեկավարել է 26 կոմիսարների շրջկոմի կուսակցության կաբինետը: 1952-53թթ. սովորել ու գերազանց գնահատականներով ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան հասարակական գիտությունների տարեկան կուրսերը և մինչև 1958 թվականը աշխատել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որպես քաղաքատնտեսության ավագ դասախոս:

1958-68թթ. աշխատել է, «Յայաստանի ժողովրդական տնտեսություն ամսագրի բաժնի վարիչ, ապա պատասխանատու քարտուղար: 1968-ից վերադառնում է դասախոսական աշխատանքի՝ Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտ, որտեղ 1978-1990թթ. ղեկավարել է քաղտնտեսության ամբիոնը:

Այժմ Բ. Միրզոյանը աշխատում է ԶՊԱՀ տնտեսագիտության տեսության ամբիոնում, որպես դասախոս և խորհրդատու:

Նա տնտեսագիտության թեկնածու է (1967թ), դոցենտ (1970թ.), պրոֆեսոր (1993թ.): 1962-ից ԽՍՀՄ լրագրողների միության անդամ է: Պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով, հասարակական ակտիվ գործունեության համար արժանացել է պատվոգրերի:

Բ. Միրզոյանը Զայաստանի առաջին տնտեսագետներից էր, որ մինչև ԽՄԿԿ 20-րդ համագումարը զեկուցագրերով, իսկ այնուհետև հրապարակախոսական հոդվածներով ապացուցում էր գյուղի քայքայման ստալինյան կործանարար քաղաքականությունը, մեծ քաղաքներում՝ բնակարանային խնդրի սրումը, կուսակցական և պետական մարմինների կողմից իրենց պաշտոնների չարաշահումները: Այդ բոլորի մասին նա ընդարձակ զեկուցագիր էր ներկայացրել Ն. Խրուշչևին՝ 1954 թվականին, որը Մոսկվայում և Երևանում դարձավ լայն քննարկման առարկա:



Բրեժնևյան «լճացման և գորբոչովյան «վերակառուցման տարիների վերաբերյալ հրատարակել է տասնյակ գիտական հոդվածներ, որոնցում բարձրացրել է սոցիալական հետազոտությունների և պլանավորման, պլանի և շուկայի փոխկապակցվածության, բնակչության միգրացիայի և դրա կարգավորման, երկու սիստեմների մրցակցության պայմաններում Խորհրդային Միության հետամնացության, վիճակագրության անհավաստիության, Անդրկովկասում ազգային հարցի սրման հիմնախնդիրները:

70-ականների սկզբներից Բ. Միրզոյանը հայտնվեց արցախյան ազատագրական շարժման ակունքներում ու դարձավ գաղափարախոսներից մեկը: Նա իր հետազոտություններում բացահայտում էր Ադրբեջանական ԽՍՀ-ում ազգային փոքրամասնությունների ճնշման պատճառները, չափերը: Նրա հոդվածները տպագրվել են Փարիզում, Նյու-Յորքում:

Ուրախալի է, որ անկախ Զայաստանում ևս նա շարունակում է ստեղծագործ գիտական գործունեությունը: Վերջին տարիներին նա հրատարակել է հինգ տասնյակ հրապարակախոսական, գիտական հոդվածներ:

Բ. Միրզոյանը այսօր էլ երիտասարդական ավյուտով շարունակում է աշխատել և ստեղծագործել:

**Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ՍԱՍՎԵԼՅԱՆ**



ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ Լարիսա Ալավերդյանի հետ

Ուսանողական կյանքը կարոտու՞մ եք: Որտե՞ղ եք սովորել

Այո՛, կարոտում եմ, անգամ ուսանողներին առնչվող հայտարարություններ տեսնելիս ցանկանում եմ նորից դառնալ ուսանող: Սովորել եմ Բաքվի մանկավարժական ինստիտուտում, իսկ 2004 թ-ից ստացել եմ իրավաբան-իրավագետի կրթություն: Թեև օմբուդսմեն դառնալու համար պարտադիր չէ իրավաբանական կրթություն, այնուամենայնիվ սովորել եմ ռուսաստանյան Գագախիս ինստիտուտում:

Առարկաներից ո՞րը հատկապես չեք սիրել և, ի վերջո, յուրացրե՞լ եք այն

Ֆիզիկան: Ես ավելի շատ սիրում էի մաթեմատիկա: Իսկ ոչ մասնագիտականներից մենք ուղղակի ստիպված էինք անցնել տարօրինակ ու ծանծրալի առարկաներ, օրինակ՝ գիտական կոնունիզմը... Դուք երջանիկ եք, որ նման բաներով ստիպված չեք ծանրաբեռնվել: Մենք դրան հումորով էինք վերաբերում:

Ի՞նչ երաժշտություն էիք նախընտրում այդ տարիներին

Դասական երաժշտության մեծ երկրպագու եմ: Այդ տարիներին Բաքվում բավականին բարձր մակարդակի հյուրախաղեր էին կազմակերպվում, որոնց միշտ ներկա էին գտնվում: Նույն ավանդույթը պահպանել եմ Երևան տեղափոխվելուց հետո: Ապրում էի Օպերայի մոտ և միշտ գնում էի համերգների:

Թղթակցե՞լ եք արդյոք ուսանողական պարբերականների

Լինելով մաթեմատիկական ֆակուլտետի ուսանողներ՝ մեզ համար ձեռագիր թերթեր ենք պատրաստել՝ մոտ 6 համար: Ես այնտեղ գրել եմ մի նյութ Յենրիխ Յեյնեի ստեղծագործության մասին: Բոլորս գրում էինք չափածո և այնպիսի հարցեր էինք շոշափում, որ մի անգամ նոր համարի հետ ծանոթանալիս դասախոսը բարկացավ, վերցրեց թերթը և... հուզվեց... Ես դա հիշում եմ որպես իմ լրագրողական՝ այդպես էլ չմարած մարմաջի փորձ...

Սպորտով զբաղվե՞լ եք

Այո՛, մարմնամարզությամբ. կարծում եմ, որ կան բնավորության գծեր, որոնք հնարավոր է ձեռք բերել սպորտի միջոցով, օրինակ՝ պատասխանատվության բարձր զգացում, թիմային աշխատանքի փորձ և այլն:

Շարունակվու՞մ է արդյոք ուսանողական ընկերների կամ ընկերուհիների հետ ձեր շփումը

Ցավոտ հարցերի անդրադարձանք... ուսանողական տարիների միակ ընկերուհուս վերջերս հրաժեշտ տվեցի. նա մեկնեց Ամերիկա: Մինչ այս պահն էլ ծանր եմ տանում այդ բաժանումը: Նա իմ միակ ընկերուհին է, իմ հանգրվանը. ես նրան համարում եմ զանձ: Կարծում եմ՝ իսկական ընկերոջը ոչ ոք և ոչինչ չի կարող փոխարինել:

Պատմեք ձեր առաջին ուսանողական սիրո մասին

Եվարեստ Գալուա: Ֆրանսիացի մաթեմատիկոս է (ծիծաղում է): 21 տարեկանում մահացել է: Երկար տարիներ այդ զգացումնքն իշխում էր ինձ վրա: Ես ուշ եմ ամուսնացել և ուշ եմ «պրակտիկ սիրահարվել». այդ հարցում իր ներդրումն ունի Գալուան: Սակայն սիրո ամենանուրբ ու հուզումնալից զգացումները պարուրել եմ 14-15 տարեկանում... նա ինձնից բարձր դասարանում էր սովորում, երկուսս էլ առանց որևէ խոսքի ամեն ինչ հասկանում էինք:

Ո՞րն է ձեր ամենահաջողված «Ֆիրմային ուտեստը

Ես ինձ համարում եմ աղցանների մասնագետ: Պատրաստում եմ գարնանային աղցաններ, և բոլորը հավանում են իմ «գապիկանկաները»: Պաշտետներ ևս լավ եմ պատրաստում:



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ԳՐԾ №2

Շուտով Ամանոր է. ինչպե՞ս եք համատեղելու աշխատանքն ու ամանորյա պատրաստությունները

Ամանորին, թե՛ ոչ, մեր տան ճաշը ես եմ պատրաստում՝ առավոտ շուտ... Աժ-ը ինձ տալիս է ավելի մեծ հնարավորություն, քան մինչ այդ եղած մյուս աշխատանքները, քանի որ Ամանորի նախորդ օրերին մենք արձակուրդի մեջ ենք լինում:

Ուսանողական տարիների հետ կապված ուշացած խոստովանություն կհիշե՞ք

Մի անգամ ընկերուհուս փոխարեն քննության եմ մասնակցել: Նա մաթեմատիկայից այնքան էլ լավ չէր, իսկ ես սիրում էի այդ առարկան, և հետո քննությունն ինձ համար միշտ տոն էր: Մեր նկարներն իրար շատ նման էին, և ես համաձայնեցի դա անել, սակայն մեղքի զգացումով...

Քաղաքականությամբ զբաղվում եք ուսանողական տարիների՞ց

Ո՛չ: Ավելի ստույգ՝ հասարակական աշխատանքներով էի տարված: Ես ինձ համարում եմ կայացած այդ դաշտում: Իսկ քաղաքական առումով... եթե Արցախյան շարժումը որակենք որպես քաղաքական իրադարձություն, ապա՝ այդ, անշուշտ զբաղվել եմ և 20 տարի է՝ զբաղվում եմ, սակայն զուտ քաղաքական գործունեությամբ զբաղվում եմ 2007 թ-ի մարտից:

Հարցազրույցը անցկացրեց
Նատալյա Ծատուրյան

Մուրացիկ երեխան այբուբեն է սովորում աստիճանների վրա... ո՞վ մարդկային արդարություն...

Միշտ էլ հետաքրքրվել եմ այն մարդկանցով, ում կյանքը և հանգամանքները դուրս են շարտել քաղաքակրթության և մարդու ստեղծած 4 պատեր ու տանիք ունեցող շինություններից, բոլոր տեսակի մարդկային պայմանականություններից ու քաղաքավարության սահմաններից և ստիպել են ապրել փողոցներում, ստորգետնյա անցումների աստիճաններին, այս կամ այն «սեփականացրած» նստարաններին: Նրանք լինում են և՛ կիսախելագար-կիսատաղանդավոր, և՛ թերզարգացած մտքի տեր, և՛ արժանապատվությունը կորցրած ու հանգամանքների հետ պատերազմում պարտված, և՛ ծնված օրվանից փողոցը ժառանգած մարդիկ: Թերևս, վերջինների թվին է պատկանում «Բարեկամություն» մետրոյի անցումներից մեկի աստիճաններին բնակություն հաստատած կնոջ դուստրը (նա մոտ 8-9 տարեկան է), որը դեռ բարուրից սկսած մասնակցում է մուրացկանության այդ տիպի արարողությանը: Այդ կնոջ թշվառ տեսքը և «թքած ունեմ» ձեր քաղաքակրթության վրա ասող հայացքն ու այդ նույն միտքն արտահայտող նրա գործողություններն ստիպում են ինձ տիպիայամբ շրջել գլուխս այդ կողմով անցնելիս: Եվ այդպես էլ արել էի վերջերս այդ նույն աստիճաններով բարձրանալիս, երբ նրա դստեր աղիողորմ լացն ստիպեց ինձ շրջվել նրա կողմ... և ի՞նչ տեսա... թող որ զարմանքից ցնցվեմ այլազգի բոլոր մուրացիկներն ու քաղաքացիները... այդ մուրացկանն իր երեխային գրել էր սովորեցնում... ջարդված պոչով գրիչն ու խուճացած թերթը ձեռքին՝ այդ աղջնակը լալիս էր մոր՝ գլխին ուղղված հարվածից շշմած. վերջինս պահանջում էր գեղեցիկ գրել: Ապշել կարելի էր: Եվ միանգամից գիտակցությունս ծակեց այն միտքը, որ այստեղ՝ այս սառն աստիճաններին նստած՝ մուրացկանն իր երեխային ծեծելով հայոց տառերն է սովորեցնում (ուրեմն՝ նա հայ մուրացիկ է և այստեղ էլ չի կորցրել իր ազգին հատուկ ուսումնատեղությունն ու երեխայի միտքն ուսումով լուսավորելու ցանկությունը): Իսկ այնտեղ՝ շքեղ ու տաքուկ սենյակում, մի պարարտ պաշտոնյա իր ցուցամատով ու միջնամատով սեղմում է իր կարմրաթուշ բալիկի կարմիր թուշիկն ու հիշեցնում նրան «հորդ դեմ խաղ չկա, պետք լինի՝ բոլոր ուսուցիչներիդ կզնեն, դու գիտե՞ս՝ ում զավակն ես... և այլն (ուրեմն՝ նա հայի դեմքը կորցրած ու միայն հացիվ ապրող կենսաբանական էակ է): Եվ լույսի



պսակը ճակատներին՝ աչքիս առաջ հառնում են բոլոր այն մեծերը, ովքեր գրով ու գիտությամբ են զինել ազգի զավակներին, (այդպես վարվել են և մեր հեղափոխականներից շատերը. չէ՞ որ, ի վերջո, միայն զարգացած ու լուսավոր մտքի տեր մարդը կարող է հասկանալ, թե ինչ պահանջներ ունի պետությունից, ինչ իրավունքներ ու պարտականություններ ունի, ինչի համար արժե պայքարել և ինչպես արժե պայքարել՝ ցանկալի արդյունքին հասնելու համար), ու ամոթի խարազանը ճակատներին՝ բոլոր այն անձինք, որոնց անպատասխանատու արարքների պատճառով այսօր այսքան շատ է տգիտությունը մեր երկրում... և այն դեպքում, երբ համալսարանները լեփ լեցուն են ուսանողներով ու դասախոսներով, երկիրն էլ լիքն է համալսարաններով: Հասկացե՞լ էր արդյոք այս ամենն այդ մուրացկանը և արդյո՞ք դուստրը ևս կարժանանա մոր ճակատագրին... նախախնամության խնդիրն է... այստեղ ցնցողը մուրացկանության այս հայկական տեսակն էր, նրանց դաժան ու գարշելի կյանքի վրա Աստծո միջամտությամբ սփռվող «այբ ու «բեն -ի հուսատու լույսը...

Նատալյա Ծատուրյան

ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱՎ ԳՆԱԼ և ԿԵՆԴԱՆԻ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ. Հայաստանում առաջին սկաուտական կազմակերպության խորհուրդները

Պատրաստվում եք արշավ գնալ: Երկար վարանո՞ւմ եք ինչպես պատրաստվել, ի՞նչ վերցնել ու հագնել... Ձեզ օգնելու համար հանդիպեցինք Հայաստանի Ազգային սկաուտական կազմակերպության՝ ՀԱՍԿ-ի ատենապետ՝ Յրաչյա Շմավոնյանի և միության Երևանի մասնաճյուղի խմբապետ Արթուր Կարապետյանի հետ, որոնք անմիջական կապ ունեն արշավների, բանակումների և այլ ժամանցային և ուսուցողական միջոցառումների կազմակերպման հետ:

- **Կազմակերպում եք արշավներ ձմռանը:**
- Այո իհարկե կազմակերպում ենք:
- **Որ վայրն է ավելի հարմար գնալ ձմռանը:**
- Որպես ձմեռային արշավի տեղ Ծաղկածորը շատ հարմար է, թե ճանաչողական, թե տուրիստական, թե հաճույքի համար: Ունենք դժվարություններ հաղթահարելու շատ տարբեր տեղեր:
- **Ո՞րոնք են Սկաուտի պայուսակում ամենակարևոր և անհրաժեշտ իրերը:**
- Ամենակարևորն իհարկե արշավի տեղանքն է, որից էլ կախված է արշավագնացների համապատասխան կզգեստի, քնապարկի, առաջին անհրաժեշտ բուժօգնության կամ՝ կարմիր խաչի արկղիկի ընտրությունը:
- **Ինչպիսի՞ հագուստ է անհրաժեշտ արշավի գնալիս:**
- Երևի լեռնային, սպորտային. ավելի շատ սպորտային:
- **Արշավ գնալիս ի՞նչ ուտելիք արժե վերցնել:**
- Հիմնականում՝ չփչացող ուտելիք, ոչ յուղալի, ավելի լավ կլինի պահածոներ վերցնել:
- **Մի քանի խորհուրդ՝ արշավի գնացողներին:**
- Կցանկանամ ասել, որ մեկնողները նախորոք ծանոթ լինեն տեղանքին և իմանան իրենց սպասող դժվարությունների մասին: Արշավները լինում են մի քանի տեսակ՝ մեկօրյա, այսինքն խումբը մի կետից շարժվում է դեպի մյուսը և վերադառնում է՝ ճանապարհին հաղթահարելով տարբեր դժվարություններ: Իսկ երեկոյան կամ եռօրյա արշավները տարբերվում են դրանով, որ արշավախումբն իր հետ վրաններ է վերցնում և որոշված տեղանքում ճամբար ստեղծում,

խարույկ վառում: Նշեմ որ 1989 թվից մեր կազմակերպությունը անց է կացնում արշավներ, բանակումներ և այլ սկաուտական միջոցառումներ և այդ համատեքստում մեր կազմակերպության անդամները բավականին հմտացած են:

Վերջում հիշեցնեմ արշավի հիմնական կատեգորիաները.

Անձնակազմ:

Ձեր հանգիստը կախված է նրանից թե ի՞նչ խմբով եք գնում: Փնթփթանները թող մնան տանը և հեռուստացույց նայեն, իսկական արկածները դժվարությունները նրանց համար չեն:

Ճամպրուկ: Սա արշավ է, այլ ոչ թե սորաձևության ցուցադրություն: Ավելի լավ կլինի վերցնել հին իրեր, որոնք չեք ափսոսի պատռել կամ կեղտոտել: Արշավի գնացողների պայուսակում միշտ կան հետևյալ իրերը՝ լապտեր, ծալովի դասակ եւ կրակայրիչ, կողմնացույց: Հարկ չկա ձեզ հետ վերցնել թանկարժեք իրեր, ոսկյա ականջօղեր, CD-փլեյերներ և այլն: Կոշիկը շատ կարևոր է: Գերադասելի է կրունկները թողնել տանը: Արշավի համար ամենալավ կոշիկները կեղերն են:

Սնունդ: Նախորոք ծրագրեք թե ինչով եք սնվելու, քանզի դրանից է կախված ճամպրուկի չափերը: Իդեալական արշավի ուտեստներն են. նրբերշիկները խորոված կրակի վրա:

Վտանգներ: Չգուշացեք միջատներից, որոնք կարող են հավաքվել ձեր խարույկի վրա: Այդ «վամպիր» մոծակները կարող են խանգարել ձեր հանգիստը: Նրանցից պաշտպանվելու համար օգտագործեք զանազան քսուքներ:



ՈՒՍԱՆՈՂԻ ԶԱՅՆԸ խորհուրդ է տալիս՝


Պայուսակը դասավորելիս՝ փափուկ իրերն ու հագուստը դնել մեջքին մոտ, չմոռանալ լիցքավորել հեռախոսի մարտկոցը, ծնողներին տեղեկացնել արշավախմբին մասնակիցներից մի քանիսի հեռախոսահամարները, անպայման վերցնել գլխարկ՝ արևահարումից պաշտպանվելու համար:

Անուշ Լալայան

Սկաուտությունը մանկապատանեկան, երիտասարդական կամավորական շարժում է, որի նպատակն է դաստիարակել հասարակայնորեն ակտիվ, հոգեպես ամուր, հայրենասեր ազատամիտ և գիտակից սերունդ: Սկաուտությունը հիմնադրել է Ռոբերտ Սթիվենսոն Սմիթ Բեյդըն Փաուելը 1907թ օգոստոսին, Անգլիայում: Հայկական իրականությունում սկաուտական շարժումն առաջացել է 20-րդ դարասկզբին, Պոլսում: Եվրոպայում Արդեն տարածում գտած սկաուտության ալիքները հասան նաև Հայաստան, և առանձին բակերում սկսեցին գործել սկաուտական խմբեր: 1910թ ապրիլի 18-ին Պոլսի փողոցներում տեղի ունեցավ առաջին սկաուտների երթը: Առաջին հայկական սկաուտական միությունը Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունն է, որը հիմնադրվել է 1918-ին, աշխարհում ունի 90 մասնաճյուղ - անդամների թիվն անցնում է 6 հազարից: Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպությունը Հ.Մ.Ը.Մ.-ի հայաստանյան մասնաճյուղն է:

ՕԴՈՔԼԱՍՏՈՒԿ-ամանյա.

Վիրտուալ «ասպետներն ու խաբկանքի «գոհերը



Facebook.com, msn, icq, skype, yahoo և նմանատիպ վերտուալ շփումների համար ստեղծված կայքերը հայերի տասարդության կյանքն են մտել վաղուց, սակայն այն ինչ արեց ռուսական одноклассники.ru կայքը, գերազանցեց նույնիսկ ստեղծողների սպասելիքները: Կայքի նպատակն էր համախմբել համադասարանցիներին ու նրանց միջև շփում կազմակերպել, սակայն այն վաղուց փոխել է իր նպատակը, բայց ոչ նշանակությունը: Ներկայումս այնտեղ գրանցված է շուրջ 25 միլիոն անդամ, որոնք հեշտությամբ կարող են շփվել իրար հետ, նկարներ ներբեռնել, գնահատել միմյանց նկարները, խումբ ստեղծել, խոսել հուզող խնդիրների շուրջ, գտնել նոր ու չկորցնել կապը հին ընկերների հետ: Մարդիկ կայքն օգտագործում են տարբեր նպատակներով՝ քարոզչական (օրինակ նախընտրական շրջանում կայքը դարձել էր այլընտրանքային քարոզարշավի տարբերակ), ոմանք պարզապես անկեղծ շփման կարիք ունեն, ոմանց համար հետաքրքիր է, ոմանք էլ՝ այդ օվկիանում փնտրում են այն «միակին»: Փաստն այն է, որ այս հիվանդությունը օրեցօր իր «ճիրանների մեջ է կլանում նորանոր մարդկանց: Պարզաբանելու համար այս հիվանդության իրական մասշտաբները դիմեցի ինտերնետ

ակումբում աշխատող Էդգար Ներսիսյանին, որը նշեց, թե ակումբի հաճախորդների 95 տոկոսը одноклассники.ru կայքի ակտիվ «սպառողներն են: Ըստ 24-ամյա Աննոի, «կայքը մի ուրիշ աշխարհ է, իր օրենքներն ունի, այն կյանքի դասերի մի առանձին համալսարան է, ուր կարող ես շփվել մարդկային տարբեր որակումներ ունեցող անձանց հետ: ՀՊԾՀ-ի ուսանող Հակոբը ուրախությամբ նշեց, որ այս կայքի միջոցով գտել է իր սիրած էակին. «Մենք երկուսս էլ սովորում ենք նույն ֆակուլտետում, բայց իրար չէինք ճանաչում, գուցե այդպես էլ չճանաչեինք, եթե չլիներ այս կայքը: Ես երջանիկ եմ այս ճակատագրական պատահականության համար, - ասում է Հակոբը: Իսկ ԵՊՀ-ի ուսանողուհի Նաիրան կայքի գոհերից է. «Սկզբում հետաքրքիր էր նոր ընկերների հետ շփվելը, սակայն հետո զգացի, որ ամբողջ օրը տարված եմ դրանով, անհաղթահարելի կախվածություն ունեի, մոռացել էի դասերս, ապրում էի միայն կայքի շրջանակներում, շուտով հասկացա, որ այսպես անհնար է շարունակել, քանի որ կյանքից հետ էի մնում ու անտեսում շուրջս տեղի ունեցող իրադարձությունները, ունեցա նաև առողջական խնդիրներ՝ անքնություն, տեսողության վատթարացում, - ասում է Նաիրան՝ շեշտելով, որ ընկերների, ծնոցների հորդորով կարողացել է հաղթահարել այս «հիվանդությունը» - փառքով դուրս գալ նրա ճիրաններից: Իրական կյանքում, - շարունակում է նա, - շատ ավելի հեշտ է շփվել մարդկանց հետ, ճանաչել նրանց, իսկ վերտուալ կյանքում կարծես բոլորը բարեպաշտության շղարշի տակ են:

Լիլիթ Լալայան
Շարունակելի



ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բիլ Գեյթսը կրճատում է բարեգործական ծրագրերը

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի արդյունքում կրճատվել է նաև միլիարդատերերի բարեգործության ծրագրերը: Մոլորակի ամենահարուստ, ամենաշռայլ բարերաններից՝ Բիլ Գեյթսն իր բարեգործական օգնությունը հաջորդ տարի կրճատելու է 10 տոկոսով: Հիմնադրամը, որը հարյուր միլիոնավոր դոլարներ է հատկացրել ՉԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և սովի դեմ պայքարելու համար, չի նշում ավելի վաղ ծրագրված օգնության բացարձակ չափը: Գեյթսը, որը «Ֆորբս»-ի վարկածով ավելի քան տասը տարի առաջինն էր միլիարդատերերի ցուցակում, նաև կոչ է արել իր բարեգործական հիմնադրամի անձնակազմին կրճատել իրենց կարիքների համար կատարվող ծախսերը:



Մադոննան կվաստակի 282 մլն դոլար

Հանրաճանաչ Մադոննայի «Sticky and Sweet» համերգային շրջագայությունը կարող է ամենաեկամտաբերը լինել՝ 282 մլն դոլար: Օգոստոսի 23-ին մեկնարկած շրջագայությունից երգչուհին արդեն ստացել է 207 մլն դոլարի եկամուտ: Շրջագայությունը նվիրված է երգչուհու «Hard Candy» ալբոմին: Այն կավարտվի դեկտեմբերի 21-ին, Բրազիլիայում: Մադոննայի նախորդ շրջագայությունը, որը մեկնարկել էր 2006-ին, պակաս եկամտաբեր չէր՝ 193 մլն դոլար:



Գերմանացիները հակակշռում են «Օսկար -ին ու «Գրեմմի -ին

Գերմանիայում կայացել է հեղինակավոր Բեմբի 60-րդ հորելյանական մրցանակաբաշխությունը: Այն անցկացնում են գերմանական լրատվամիջոցները: Տարվա լավագույն երգչուհի է ճանաչվել Բրիթնի Սփիրսը: Աշխարհի լավագույն դերասանը Կիանու Ռիվզն է, իսկ դերասանուհին՝ Մեգ Ռայանը: Պլասիդո Դոմինգոն ճանաչվել է աշխարհի լավագույն դասական: Այսկերպ գերմանացիները միանգամից հակակշռում են ամերկյան 3 մրցանակաբաշխություններին՝ Օսկարին, Էմմին և Գրեմմին:


Ի՞նչ նվիրել ամանորին:

Ռուսաստանցիների, գերմանացիների և ֆրանսիացիների մեծ մասը համաշխարհային ճգնաժամի պայմաններում գերադասում է ամանորին նվեր ստանալ փողի տեսքով, ընդ որում՝ կանխիկ: Ցանկալի նվերների շարքում այս տարի երկրորդ տեղում են կոսմետիկան և օժանելիքը, երրորդում՝ հագուստն ու կոշիկը: Գրքերը զբաղեցնում են միայն ութերորդ տեղը:



Սկսվում է Սանտաների շքերթը...

Ամեն տարի ամանորյա տոներից առաջ Տոկիոյում հավաքվում են ապագա Սանտա Կլաուսները՝ քննարկելու իրենց հետագա անելիքները: Ավանդաբար Սանտաների հավաքը սկսվում է Լուճապարկում: Ի դեպ Սանտա Կլաուս լինելու ցանկություն են հայտնում ոչ միայն տղամարդիկ, այլև կայանք: 7-օրյա հավաքի ընթացքում սանտաները նվերներ են պատրաստում երեխաների համար, սովորում ամանորյա ոտանավորներ ու օրհներգեր: Սանտաները իրենց աշխատանքը կսկսեն դեկտեմբերի 25-ից:



ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԹԵՍՍ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԳԻՇԵՐԸ ԿԱՐՈ՞Ղ ԵՍ ԳՏՆԵԼ ՔՈ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1. Որտե՞ղ ես սովորաբար դիմավորում ես տարին.

- ա) տանը, ծնողներիդ հետ
- բ) ռեստորանում, ազգականներիդ հետ
- գ) պարասրահում, ընկերներիդ շրջապատում
- դ) ճանապարհին, հիմնականում՝ անծանոթ մարդկանց հետ

2. Իսկ որտե՞ղ կցանկանայիր դիմավորել.

- ա) Հանրապետության հրապարակում
- բ) Մալդիվյան կղզիներում
- գ) Ձմեռ պապի հայրենիքում
- դ) ուրիշ մոլորակում

3. Ե՞րբ ես սկսում պատրաստվել ես տարվա տոնակատարություններին.

- ա) ամբողջ տարվա ընթացքում
- բ) տոնակատարություններից մի շաբաթ առաջ
- գ) դեկտեմբերի սկզբին
- դ) դեկտեմբերի 31-ին

4. Նոր տարվա նվերները գնում ես.

- ա) նախօրոք, խանութում
- բ) ամանորյա գեղչերի ժամանակ
- գ) վերջին օրերին
- դ) նվիրում ես այն, ինչ քեզ նվիրել են մի տարի առաջ

5. Նոր տարին կդիմավորե՞ս անծանոթների հետ.

- ա) ոչ մի դեպքում
- բ) միայն եթե անծանոթներ քիչ լինեն
- գ) եթե հետաքրքիր մարդիկ են՝ ինչո՞ւ ոչ
- դ) այդպես էլ անում ես

6. Դիտո՞ւմ ես նոր տարվա ավանդական հեռուստահաղորդումները.

- ա) այո, սկզբից մինչև վերջ
- բ) միայն քո սիրելիները
- գ) երբ ժամանակ է լինում
- դ) իսկ ինչո՞ւ. հեռուստացույց դիտել

7. Տոնակատարությունից հետո առավոտյան արթնանալով.

- ա) միանգամից անցնում ես իրերը հավաքելուն
- բ) ուրախանում ես նոր օրվանով ու նոր տարվանով
- գ) փորձում ես ինքդ քեզ ուշքի բերել
- դ) փորձում ես հասկանալ՝ որտեղ ես գտնվում



Այժմ ընտրիր քո պատասխաններում ավելի շատ հանդիպող տարբերակը

Տարբերակ ա: Նոր տարին դիմավորում ես միօրինակ՝ տնեցիներիդ հետ, տոնածառի ու ավանդական խորտիկներով սեղանի շուրջ: Այս ամենը շատ լավ է, բայց գրկում քեզ հիասքանչ անծանոթ(ուհի)ի հետ հանդիպելու հնարավորությունից: Երբ կյանքում ամեն ինչ ծրագրված է, երջանիկ պատահականություն տեղի չի ունենա: Փորձիր փոքր-ինչ փոխել կերպարդ ու նորամուծություններ մտցնել տոնակատարության մեջ. չէ՞ որ երջանկությունն ավելի հեշտ կմտնի բաց դռնից:

Տարբերակ բ: Դու և ողջամիտ ես, և ռոմանտիկ: Նոր տարվա գիշերը չհրաժարվելով հանդերձ հարազատներիդ շրջապատից՝ կարող ես քո ընկերախումբ ընդունել նաև անծանոթի: Դու բաց ես շփման համար, միաժամանակ չես խախտում Նոր տարվա ավանդույթները:

Տարբերակ գ: Դու ոչ միայն դեմ չես նոր տարվա գիշերը երկրորդ կեսիդ հանդիպելուն, այլև նախօրոք պատրաստվում ես դրան՝ ընտրելով տոնակատարության տեղն ու միջավայրը: Արկածախնդրությունը թույլ չի տալիս քեզ հանգստանալ ոչ աշխատանքային օրերին, ոչ տոներին. դու միշտ սպասում ես ճակատագրական հանդիպման, նոր տարվա գիշերը՝ առավել ևս:

Տարբերակ դ: Մինչև վերջին րոպեն չգիտես, թե որտեղ և ում հետ կդիմավորես նոր տարին, բացի այդ ընթացքում էլ ծրագրերդ կարող են փոխվել: Քառասյին կյանքի պատճառով դու անընդհատ ընկնում ես տարբեր պատմությունների մեջ: Բայց դա չի նշանակում, թե չես հանդիպի երազանքներիդ տղային (աղջկան): Ընդհակառակը՝ քո շփումներն անսահման են: Շուտով նոր տարի է, բազմաթիվ նոր ծանոթություններ, որոնցից մեկը կարող է փոխել քո կյանքը:



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀՈՒՄՈՐ

- ❁ Բանակում: Մի մայրը՝ մյուսին
 - Լսե՞լ ես, մեր զորամաս շարքային են բերել: Ազգանունը՝ ԻՆՊԵՋԻՏ:
 - Հետո ինչ...
 - Երկար կծառայի..

- ❁ - Ինչպե՞ս կրող ես տարբերել Ձինվորականին՝ լողափին կամ էլ բաղնիքում:
 - Դաջվածքների վրայի ուղազրական սխալներով...

- ❁ - Ու՞ր ես գնում...
 - Երգչախմբի պարապմունքի...
 - Իսկ ի՞նչ եք այնտեղ անում՞
 - Խաղաթուղթ ենք խաղում, գարեջուր ենք խմում...
 - Բա ե՞րբ եք երգում
 - Տուն գալու ճանապարհին...

- ❁ Ավտոբուս: Մի տարիքով մարդ...
 - Ես ի՞նչ երիտասարդներ եմ... խորամանկ... անդաստիարակ... ոչ մեկին չեն ցանկանում իրենց տեղը զիջել...
 - Ինչո՞ւ եք այդպես ասում... դուք հո մտած եք...
 - Բայց կինս կանգնած է, չէ...

- ❁ Ապարանցու հեռախոսի քարտը վառվում է... նա ձեռքի 2-րդ աստիճանի այրվածք է ստանում...

- ❁ Ապարանի քաղաքապետարանում հայտարարություն են փակցնում՝ «No Smoking ... հաջորդ օրը աշխատակիցները գործի են գալիս՝ ջինսով...



Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Ուսանողի Ձայն»-ը անկախ ուսանողական պարբերաթերթ է: Այն արտահայտում է հայաստանյան բոլոր բուհերում ուսումնառող երիտասարդների կարծիքը՝ անկախ նրանց կուսակցական ու գաղափարական պատկանելությունից: Պարբերաթերթում հոդվածներ են գրում նաև շրջանավարտները՝ առանց տարիքային սահմանափակման: Թերթի խմբագրակազմը պատասխանատվություն չի կրում առանձին հոդվածների բովանդակության համար, եթե, իհարկե, այն չի հակասում խմբագրակազմի որդեգրած բարոյական ուղղվածությանն ու չափանիշերին, ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրական ակտերին: Մեր հոդվածագրերը զերծ են մնում անձնական վիրավորանքներով համեմված հրապարակումներից: Մեր թերթը ամբիոն է՝ ոտնահարված իրավունքներով ուսանողներին: Մենք

պաշտպանում ենք ուսանողի արդար իրավունքը, փաստեր չենք աղավաղում, չենք կեղծում, մենք ուսանողի խոսափողն ենք: Մեզ հետ կարող եք համագործակցել և նամակցել՝ գրելով հետևյալ էլեկտրոնային հասցեին՝

usanoghiczayn@rambler.ru

կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ (010) 521202

կամ պարզապես այցելել մեր գրասենյակ (հասցե՝ Հանրապետության 30, «Սիմոն Վրացյան կենտրոն»):

Խմբագրակազմ

Խմբագիր՝ Ա.Գասպարյան

Խմբագրական խորհրդի անդամներ՝ Ն.Ծատուրյան, Մ.Կիրակոսյան, Կ.Խանլարյան, Ա.Հարությունյան, Մ.Կարաթորոսյան, Ա.Լալայան, Ս.Պարսյան

Սրբագրիչ՝ Ա.Հարությունյան

Ձևավորող՝ Հ.Ղազարյան